



26.11.2025թ.

Հաստատում եմ տնօրեն՝

Է. Նանյան

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ No 13/1652/25

ՀՀ Ք. Երևան, Արաբկիր համայնք ՀԷԿ թաղամաս 8 շենք 25 բն. հասցեում գտնվող  
բնակարանի շուկայական արժեքի վերաբերյալ:

Սույն հաշվետվությունը կազմված է <<Գնահատման գործունեության մասին>> ՀՀ օրենքի  
և ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1355-Ն որոշմամբ հաստատված  
անշարժ գույքի գնահատման ստանդարտի (այսուհետև ստանդարտ) պահանջներին  
համապատասխան:

Հաշվետվությունը կազմված է 37 /Երեսույթ/ էջից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ՝ ՀԿԱԾ Ք. Երևան Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր վարչական  
շրջանների բաժին

ԳՆԱՀԱՏՈՂ՝ <<Արմեքսպերտիզա>> ՍՊԸ  
375626 ք.Երևան, Գ. Նժդեհ 26  
ՀՎՀՀ 02231188  
Հ/հ 163018008868 ՀԷԲ <<Շենգավիթ>> մ/ճ

Հայաստանի Հանրապետություն

ԵՐԵՎԱՆ 2025



Բովանդակություն

|                                                                                                      |    |
|------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1. Գնահատման առաջադրանքը.....                                                                        | 3  |
| 2. Գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկ.....                                              | 3  |
| 3. Գնահատման պատվիրատուն և հիմքը.....                                                                | 3  |
| 4. Գնահատվող օբյեկտը, նույնականացման տվյալները և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը..... | 3  |
| 5. Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը).....                                                    | 3  |
| 6. Գնահատման ամսաթվերը.....                                                                          | 6  |
| 7. Հաշվետվության ձևը.....                                                                            | 6  |
| 8. Գնահատման աշխատանքների ընթացակարգը.....                                                           | 6  |
| 9. Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը.....                                                    | 7  |
| 10. Առավել արդյունավետ օգտագործում.....                                                              | 10 |
| 11. Գնահատման մոտեցումների (մեթոդների) ընտրությունը.....                                             | 11 |
| 12. Շուկայական արժեքի հաշվարկ համեմատական մեթոդով.....                                               | 15 |
| 13. Շուկայական արժեքի հաշվարկ եկամտային մոտեցմամբ.....                                               | 20 |
| 14. Եզրակացություն գնահատման առարկայի շուկայական արժեքի վերաբերյալ.....                              | 28 |
| 15. Օգտագործված փաստաթղթեր.....                                                                      | 29 |
| 16. Սահմանափակումներ և հատուկ պայմաններ.....                                                         | 31 |
| 17. Օգտագործված գրականություն.....                                                                   | 32 |



## 1. Գնահատման առաջադրանքը

ՀՀ Ք. Երևան, Արաբկիր համայնք ՀԵԿ թաղամաս 8 շենք 25 բն. հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը:

Գնահատողի և գնահատման կազմակերպության տվյալները

|                                     |                                |
|-------------------------------------|--------------------------------|
| Գնահատման կազմակերպության անվանումը | «Արմեքսպերտիզա» ՍՊԸ            |
| Իրավաբանական հասցեն                 | ք. Երևան, Գ. Նժդեհ 26          |
| Տնօրեն                              | Է. Նանյան                      |
| Գնահատող                            | Էդուարդ Գեորգիի Նանյան         |
| Գնահատողի որակավորման վկայական      | ԳԳ-2023-26, տրված 27.03.2023թ. |

## 2. Գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկ

Ներկայացվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 19052023-01-0329 վկայականի պատճենը:

## 3. Գնահատման պատվիրատուն և հիմքը

Գնահատման հիմք է հանդիսանում պատվիրատուի՝ 06.12.2024թ կնքված թիվ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-24/2 պայմանագիրը և 19.09.2025թ. ք. Երևան Աջափնյակ, Դավթաշեն և Արաբկիր վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող՝ արդարադատության

## 4. Գնահատվող օբյեկտը, նույնականացման տվյալները և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը

Տվյալ հաշվետվության գնահատման օբյեկտը հանդիսանում է ՀՀ Ք. Երևան, Արաբկիր համայնք ՀԵԿ թաղամաս 8 շենք 25 բն. հասցեում գտնվող բնակարանը: Ըստ տրամադրված վկայականի պատճենի ընդհանուր բաժանային սեփականության իրավունքով գրանցված իրավունքի սուբյեկտ են հանդիսանում՝

## 5. Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը)

Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը)՝ ՀԿԱԾ կատարողական վարույթի շրջանակներում անշարժ գույքի բռնագանձման հետևանքով դրա իրացումը:

Գնահատման արժեքի տեսակը՝ շուկայական արժեք:

Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար

Գնահատող



կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:

1) Շուկայական արժեքի սահմանումը պետք է մեկնաբանվի՝ համաձայն հետևյալ հայեցակարգային շրջանակի՝

ա. «Հաշվարկային դրամական մեծություն»-ը վերաբերում է դրամական գնին, որը կարող է վճարվել օբյեկտի համար առևտրային շուկայական գործարքի ժամանակ: Շուկայական արժեքը հանդես է գալիս որպես առավել հավանական գին, որը, ըստ ողջամիտ նկատառումների՝ կարող է ձեռք բերվել շուկայում գնահատման ամսաթվի դրությամբ շուկայական արժեքի սահմանման մեջ եղած պայմաններին հետևելու դեպքում: Սա վաճառողի համար ձեռք բերվող արժեքներից լավագույնն է և առավել շահավետը գնորդի համար: Այդ արժեքի սահմանման ժամանակ հաշվի չեն առնվում, մասնավորապես, գործարքի հատուկ պայմաններից և հանգամանքների հետևանքով բարձրացված կամ իջեցված գները:

բ. «... որով հավանաբար կիրականացվեր...» նշվում է այն փաստը, որ գնահատվող օբյեկտի արժեքը հանդիսանում է ենթադրյալ գնահատված արժեք, այլ ոչ թե կանխորոշված կամ վաճառքի իրական գին: Այն իրենից ներկայացնում է գործարքի գինը գնահատման ամսաթվի դրությամբ, որտեղ իրականացվում են շուկայական արժեքի սահմանման մեջ եղած բոլոր այլ պայմանները:

գ. «... գնահատման ամսաթվի դրությամբ...» արտահայտում է պահանջ՝ ըստ որի արժեքը պետք է գնահատվի կոնկրետ ամսաթվի դրությամբ: Կապված այն բանի հետ, որ շուկան և շուկայական պայմանները կարող են փոփոխվել, այլ ժամանակի համար հավանական արժեքը կարող է սխալ լինել կամ չհամապատասխանել իրականությանը: Արժեքի գնահատման արդյունքն արտացոլում է գնահատման ամսաթվի դրությամբ շուկայի վիճակը և պայմանները, այլ ոչ թե որևէ այլ ամսաթվի դրությամբ:

դ. «...շահագրգիռ կողմերի միջև...» վերաբերում է շահագրգիռ գնորդին և վաճառողին:

Շահագրգիռ գնորդն ունի գնելու դրդապատճառներ, բայց ոչինչ նրան չի պարտադրում դա անել: Նման գնորդն ստիպված չէ գնում կատարել և միտված չէ ցանկացած գին վճարել: Բացի այդ, նա գնումը կատարում է՝ գործելով համաձայն ներկայիս շուկայի իրողությունների և ակնկալիքների, այլ ոչ թե երևակայական կամ հիպոթետիկ շուկայի, որոնց գոյությունը չի կարող ցուցադրվել կամ կանխատեսվել: Հնարավոր գնորդը չի վճարի շուկայականից ավելի բարձր գին: Գնահատվող օբյեկտի ներկայիս սեփականատերը նույնպես այդ «շուկան» ձևավորողների շարքում է:

Շահագրգիռ վաճառողը չի ցանկանում պարտադիր վաճառել, ստիպված չէ վաճառել և ոչ էլ պատրաստ է վաճառել ցանկացած գնով կամ հաստատել այն արժեքը, որը տվյալ



պահին չի համարվում իսկամիտ շուկայում: Շահագրգիռ վաճառողի դրդապատճառը շուկայական պայմաններում գնահատվող օբյեկտի վաճառքն է բաց շուկայում ամենահավանական գնով՝ անկախ գնից ակնկալվող շուկայի ուսումնասիրությունից հետո:

ե. «...բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում...» նշանակում է, որ կողմերի միջև չկան որևէ կոնկրետ կամ հատուկ փոխհարաբերություններ, օրինակ, մայր և դուստր ընկերությունների կամ վարձատուի և վարձակալի միջև հարաբերությունները, որոնք կարող են գնի մակարդակը դարձնել շուկային ոչ բնորոշ կամ լինել գերագնահատված: Ենթադրվում է, որ շուկայական արժեքի գնով գործարքը պետք է իրականացվի այնպիսի կողմերի միջև, որոնք կապված չեն որևէ հարաբերություններով, և կողմերից յուրաքանչյուրը գործում է ինքնուրույն: Գնահատվող օբյեկտը շուկա է հանվել առավել հարմար ձևով, որպեսզի ապահովվի դրա իրացումը ձեռք բերվող տարբերակներից լավագույնով, ողջամիտ նկատառումներով, շուկայական արժեքի սահմանմանը համապատասխան գնով: Վաճառքի մեթոդը պետք է լինի այնպիսին, որը կապահովի շուկայում վաճառողի համար հասանելի լավագույն գին: Շուկայում ցուցադրման ժամկետի տևողությունը կարող է տարբեր լինել՝ կախված գնահատվող օբյեկտի և շուկայական պայմանների տեսակից: Միակ պայմանն այն է, որ այն պետք է բավարար լինի գնահատվող օբյեկտի հանդեպ շուկայի բավարար քանակությամբ մասնակիցների ուշադրությունը գրավելու համար:

զ. «... որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն ...» նշանակում է այն ենթադրությունը, որ շահագրգիռ գնորդը, այնպես էլ շահագրգիռ վաճառողը, բավականաչափ տեղեկացված են վաճառվող օբյեկտի, դրա փաստացի և պոտենցիալ կիրառման բնույթին և հատկություններին, ինչպես նաև շուկայի վիճակի մասին ըստ գնահատման ընթացիկ ամսաթվի: Հետագայում ենթադրվում է, որ նրանցից յուրաքանչյուրը հաշվենկատ է օգտագործում համապատասխան տեղեկատվությունը՝ ձգտելով հասնել իր տեսանկյունից գործարքի առավել շահավետ արժեքի: Սա վերաբերում է գնահատման ամսաթվի դրությամբ շուկայի վիճակի հաշվարկին, այլ ոչ թե հետագա ժամկետում արտահայտված հետադարձ դատողություններին:

է. «...և առանց հարկադրանքի...» նշանակում է, որ կողմերից յուրաքանչյուրն ունի գործարքի իրականացման դրդապատճառներ, բայց կողմերից և ոչ մեկը հարկադրված կամ ստիպված չէ գործարք կատարել:

«Շուկայական արժեք» հասկացությունը ենթադրում է, որ գները սահմանվում են բաց և մրցունակ շուկայում, որտեղ մասնակիցներն օժտված են գործելու ազատությամբ: Գնահատվող օբյեկտների շուկան կարող է լինել ինչպես միջազգային, այնպես էլ տեղական, որը կարող է բաղկացած լինել բազմաթիվ գնորդներից և վաճառողներից կամ



լինել սահմանափակ մասնակիցների քանակով:

## 6. Գնահատման ամսաթվերը

Անշարժ գույքի տեղագնությունն աշխատանքները կատարվել են 11.11.2025թ.:

Անշարժ գույքի շուկայական արժեքը սահմանվել է 11.11.2025թ.:

Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը կազմվել է 26.11.2025թ.:

## 7. Հաշվետվության ձևը

Հաշվետվությունը կազմվել է պատմողական ձևով, ունի աղյուսակային և տեքստային մեկնաբանություններ:

## 8. Գնահատման աշխատանքների ընթացակարգը

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ:

1) Նախապատրաստական փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ. գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

2) Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ է պարզել գնահատման ներկայացված օբյեկտի իրավական կարգավիճակը, ինչպես նաև գնահատվող գույքի հիմնական տվյալները: Գնահատման առաջադրանքը պետք է պարտադիր ներառի գնահատման նպատակը և գնահատվող իրավունքները և սահմանափակումները: Գնահատման նպատակը և գնահատվող իրավունքի տեսակը պետք է համաձայնեցված լինեն գնահատման սուբյեկտների հետ:

3) Գնահատման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունները.

ա. գնահատվող օբյեկտի անվանման և նույնականացման վերաբերյալ,

բ. գնահատման դիմաց վճարի չափի վերաբերյալ,

գ. գնահատման ստանդարտներով սահմանված և գնահատմամբ որոշվող արժեքի տեսակի, գնահատման ամսաթվի և տարեթվի վերաբերյալ,

դ. գնահատման առաջադրանքի վերաբերյալ:

Պայմանագիրը կարող է նաև պարունակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

4) Հիմնական փուլում իրականացվում են՝



- ա. գնահատվող օբյեկտի տեղագնում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),  
բ. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,  
գ. գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,  
դ. գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,  
ե. վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,  
զ. հաշվետվության կազմում և տրամադրում:

## 9. Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը

Ըստ պատվիրատուի կողմից տրամադրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 19052023-01-0329 վկայականի պատճենի բնակարանի մակերեսը կազմում է 65,6 քմ.:

### Գնահատման առարկայի բնութագիրը

|                                                                |                                                        |
|----------------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| Հասցե                                                          | ՀՀ ք. Երևան, Արաբկիր համայնք ՀԵԿ թաղամաս 8 շենք 25 բն. |
| Սեփականատերեր                                                  |                                                        |
| Սեփականության իրավունքի գրանցման վկայական և տրման ամսաթիվ      | 19052023-01-0329<br>19.05.2023թ.                       |
| Շուկայական մոտարկված կադաստրային արժեքը (դրամ) ընդհանուր շենքի | 11 752 645                                             |
| Իրավունքի տեսակը                                               | Ընդհանուր բաժնային սեփականություն                      |
| Նպատակային նշանակությունը                                      | Բնակելի                                                |
| Գործառնական նշանակությունը                                     | Բնակելի                                                |
| Ընթացիկ շահագործումը                                           | Բնակարան                                               |
| Տրանսպորտային մատչելիություն                                   | Լավ                                                    |
| Կառույցի տիպ                                                   | Պանելային                                              |
| Հարկայնությունը/ հարկը                                         | 9-ի 7 հարկ                                             |
| Արտաքին պատերը                                                 | առանց արտաքին հարդարման                                |
| Մակերեսը (քմ)                                                  | 65,6 քմ .                                              |

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ <<ԱՐՄԵԲՍՊԵՐՏԻԶԱ>> ՍՊԸ



|                                                                                                                                                                              |                                                                                                                                                                                                |        |         |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------|---------|
| Ներքին հարդարանք (պատեր, հատակ, դռներ և պատուհաններ)                                                                                                                         | Բնակարանի մուտքի դուռը երկաթյա : Ներքին հարդարանքը կատարված է ներկանյութերով: Հատակները լամինատե, սալիկապատ, պատուհանները մետաղապլաստե: Ներքին դռները մամլված թեփատախտակով երեսապատված շպոնով: |        |         |
| Սանհանգույց                                                                                                                                                                  | Սալիկապատված է                                                                                                                                                                                 |        |         |
| Կոմունիկացիաներ՝ նորակառույց շենք է, ևնիկացիաները հասցված են մինչև բնակարանի մուտքի դուռը                                                                                    | Անվանում                                                                                                                                                                                       | Առկա է | Առկա չէ |
|                                                                                                                                                                              | Ջուր                                                                                                                                                                                           | X      |         |
|                                                                                                                                                                              | Կոյուղի                                                                                                                                                                                        | X      |         |
|                                                                                                                                                                              | Էլեկտրամատակարարում                                                                                                                                                                            | X      |         |
|                                                                                                                                                                              | Գազամատակարարում                                                                                                                                                                               | X      |         |
|                                                                                                                                                                              | Ջեռուցում                                                                                                                                                                                      |        | X       |
| Ներքին հարդարման ընդհանուր գնահատական (1-7 բալային սանդղակով)<br>1. գրոյական վիճակ, 2. վատ վիճակ, 3. միջինից ծր, 4. միջին վիճակ, 5. միջինից բարձր, 6. լավ վիճակ, 7. գերազանց | Ներքին հարդարանքը /1-7/ սանդղակով համապատասխանում է 4-րդ կատեգորիային, միջին վիճակ:                                                                                                            |        |         |
| Այլ տեղեկատվություն                                                                                                                                                          |                                                                                                                                                                                                |        |         |

Առավել մանրամասն տեսնելու համար կհրավեր ձեր հարկադրությունը կից լուսանկարչական հավելվածում:  
Տեղադրության հղումը՝

<https://yandex.com/maps/10262/yerevan/?ll=44.524197%2C40.217059&mode=search&sl=44.524233%2C40.217058&text=40.217058%2C44.524233&z=16.45>

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԵԲՍՊԵՐՏԻՉԱ» ՍՊԸ



Ստորև ներկայացվում է գնահատվող գույքի տեղադրության լուսանկարը արժանյակից և կադաստրի



Գնահատող *Զուհյան*



## Հուլայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը և անշարժ գույքի հարկը

☒ Որոշել ըստ վկայականի համարի

☐ Որոշել ըստ կադաստրային ծածկագրի

19052023-01-0329

Փախրկ

|                                                                          |                                                         |
|--------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------|
| Հարցման ամսաթիվ                                                          | 22/11/2025 14:37:09                                     |
| Անշարժ գույքի հասցեն՝                                                    | Երևան, Արարկիր Գնահատված ՀՀ Թաղամաս 8 շենք, 25 բնակարան |
| Անշարժ գույքի տեսակը՝                                                    | Բնակարան                                                |
| Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)՝ | 11 752 645.00                                           |
| Անշարժ գույքի հարկը 2024 թ. -ի համար (ՀՀ դրամ)՝                          | 3 376.32                                                |
| Անշարժ գույքի հարկը 2025 թ. -ի համար (ՀՀ դրամ)՝                          | 5 064.48                                                |
| Անշարժ գույքի հարկը 2026 թ. -ի համար (ՀՀ դրամ)՝                          | 6 752.65                                                |

Ծանոթություն՝ տվյալները արտացոլված են հարցման ամսաթվի դրությամբ Կադաստրի կոմիտեի կողմից գրանցված (հաշվառված) տվյալների հիման վրա:

Активация Windows

Чтобы активировать Windows, перейдите в раздел "Параметры".

Հարցերի դեպքում թողեք Ձեր հաղորդագրությունը

## 10. Առավել արդյունավետ օգտագործում

Առավել արդյունավետ օգտագործումն օգտագործման այն ձևն է, որը մասնակցի տեսանկյունից օբյեկտի համար ստեղծում է ամենաբարձր արժեքը:

1) Առավել արդյունավետ օգտագործումը պետք է լինի ֆիզիկապես հնարավոր (եթե այդ հանգամանքը տեղին է), ֆինանսապես իրագործելի, իրավաբանորեն թույլատրված և հանգեցնի ամենաբարձր արժեքին: Ընթացիկ օգտագործումից տարբերվելու դեպքում օբյեկտի արդյունավետ օգտագործման նպատակով կատարված ծախսերը կազդեն արժեքի վրա:

2) Գնահատվող օբյեկտի առավել արդյունավետ օգտագործումը կարող է լինել նրա ներկայիս կամ ընթացիկ օգտագործումը, երբ այն օպտիմալ է օգտագործվում: Առավել արդյունավետ օգտագործումը կարող է տարբերվել իր ընթացիկ օգտագործումից կամ կարող է իրենից ներկայացնել կանոնակարգված լիկվիդացում:

3) Գնահատվող օբյեկտի առավել արդյունավետ օգտագործումը, որը գնահատվել է առանձին, կարող է տարբերվել նրա առավել արդյունավետ օգտագործումից՝ որպես օբյեկտների խմբի մաս, երբ պետք է հաշվի առնվի խմբի ընդհանուր արժեքի մեջ նրա ներդրման չափը:

4) Առավել արդյունավետ օգտագործման տեսակը որոշելը ներառում է հետևյալը՝

ա. որոշել, թե արդյոք գնահատվող օբյեկտի այս կամ այն օգտագործումը ֆիզիկապես հնարավոր է, այսինքն, հաշվի կառնվեն այն օգտագործման ձևերը, որոնք մասնակցները կհամարեն ողջամիտ:

բ. իրավաբանորեն թույլատրելի պահանջը հաշվի առնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գնահատվող օբյեկտի օգտագործման ցանկացած իրավական սահմանափակում (քաղաքաշինական սահմանափակումներ, ինչպես նաև հավանականություն, որ այդ սահմանափակումները կփոխվեն հետագայում և այլն):

գ. օգտագործումը ֆինանսապես իրագործելի դարձնելու պահանջը հաշվի է առնում, թե արդյոք գնահատվող օբյեկտի այլընտրանքային օգտագործումը, որը ֆիզիկապես

Գնահատող

*Շահապետ*



հնարավոր է և իրավաբանորեն թույլատրելի, կբերի արդյոք բավարար եկամուտներ տիպային մասնակցին առավել շատ, քան կստացվեր ընթացիկ օգտագործումից: Այդ դեպքում պետք է հաշվի առնել օբյեկտի այլընտրանքային օգտագործման անցնելու ծախսերը:

Գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման չափանիշն է հանդիսանում արժեքի մեծացումը հարմար և խելամիտ, երկարաժամկետ շահույթի նորմայի և ռիսկի մեծության դեպքում: Ստորև ներկայացված է այդ վերլուծության արդյունքում գնահատողի եզրահանգումը:

Ֆիզիկապես հնարավոր, օրենսդրորեն թույլատրելի և տնտեսապես նպատակահարմար տարբերակներից առավել շահութաբերը հանդիսանում է ներկա օգտագործման տարբերակը:

| Նպատակային նշանակություն | Ներկայում օգտագործվող | Հնարավորին օգտագործվող | Անշարժ գույքը վարձակալության հանձնելու հնարավորություն |
|--------------------------|-----------------------|------------------------|--------------------------------------------------------|
| Բնակելի/բնակարան         | v                     | v                      | v                                                      |
| Հասարակական              | x                     | x                      | x                                                      |

## 11. Գնահատման մոտեցումների (մեթոդների) ընտրությունը.

Անշարժ գույքի գնահատման դասական մոտեցումներն են.

- ա) համեմատական մոտեցում
- բ) ծախսային մոտեցում
- գ) եկամտային մոտեցում

### Համեմատական մոտեցում

Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն՝

Համեմատական մոտեցումը ներառում է հետևյալ մեթոդները՝

Համադրելի գործարքների մեթոդ

Համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդ

Քանի որ գնահատման ներկայացված գույքը անշարժ գույք է, ուստի կիրառվում է համեմատական գործարքների մեթոդը:

Համադրելի գործարքների մեթոդը, որը նաև հայտնի է որպես կողմնորոշիչ գործարքների մեթոդ, արժեքը որոշելու նպատակով օգտագործվում է նույնական կամ համադրելի օբյեկտների հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերն են՝ որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից, մասնավորապես.



ա. որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայում մասնակիցների կողմից,

բ. որոշել համապատասխան համադրելի գործարքները և հաշվարկել այդ գործարքների հիմնական գնահատման չափանիշները,

գ. կատարել համադրելի օբյեկտների և գնահատվող օբյեկտների որակական և քանակական նմանությունների և տարբերությունների հետևողական համեմատական վերլուծություն, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից,

դ. կատարել անհրաժեշտ ճշգրտումներ, եթե այդպիսիք կան, գնահատման ցուցանիշներում, որպեսզի արտացոլվի գնահատվող օբյեկտի և համադրելի օբյեկտների տարբերությունները,

ե. դիտարկել օբյեկտի գնահատման համար ճշգրտված ցուցանիշների կիրառում,

զ. եթե օգտագործվել են գնահատման մի քանի ցուցանիշներ, ստացված արժեքի ցուցանիշների համաձայնեցումը :

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ գնահատողն ունի բավարար քանակությամբ արժանահավատ տեղեկատվություն, որը առավելագույնս արտացոլում և բացահայտում է այն գործոնները որոնց ազդեցությամբ տվյալ անշարժ գույքի վաճառքը բաց մրցակցային շուկայում առավել հավանական է, ուստի համեմատական մոտեցման կիրառումը գնահատվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքը որոշելու համար հիմնավորված է:

#### **Եկամտային մոտեցում**

Եկամտային մոտեցման շրջանակներում գնահատման արդյունքների ստացման համար կիրառվում են տարբեր մեթոդներ, որոնց ընդհանրությունը կայանում է նրանում, որ արժեքը որոշվում է փաստացի կամ կանխատեսվող եկամուտների վրա, որոնք ստանում է կամ կարող է ստանալ իրավունքի սեփականատերը :

Եկամտային մոտեցումը տրամադրում է արժեքի ցուցիչ՝ ապագա դրամական հոսքերը փոխակերպելով ընդհանուր ընթացիկ արժեքի: Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա:

Եկամտային մոտեցման կարևորագույն հիմքն է հանդիսանում է այն, որ ներդրողները ակնկալում են շահույթ ստանալ իրենց ներդրումներից, և որ նման եկամուտը պետք է արտացոլի ներդրումների ռիսկի ենթադրյալ մակարդակը:

Որպես կանոն, ներդրողները ակնկալել են փոխհատուցում միայն համակարգված ռիսկի համար (նաև հայտնի է որպես «շուկայական ռիսկ» կամ «չդիվերսիֆիկացված ռիսկ»):

Եկամտային մոտեցման մեթոդները փաստացի հիմնված են ապագա դրամական հոսքերի գումարների դիսկոնտավորմանը (փոխակերպմանը) ընթացիկ արժեքի: Դրանք դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի տարբերակներն են:

Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդ (ԴՀԴ)

ԴՀԴ մեթոդի համաձայն՝ կանխատեսվող դրամական հոսքը դիսկոնտավորվում է հակառակ ուղղությամբ (ապագայից և) մինչ գնահատման ամսաթիվը, որը արդյունքում թույլ է տալիս ստանալ գնահատվող օբյեկտի ընթացիկ արժեքը:



### ԴՇԴ մեթոդի հիմնական փուլերն են՝

ա. ըստ գնահատվող օբյեկտի և դրա գնահատման առանձնահատկություններից կախված դրամական հոսքի առավել հարմար տեսակի ընտրություն,

բ. դրամական հոսքերի կանխատեսման առավել օպտիմալ կոնկրետ ժամանակահատվածի որոշում,

գ. ամբողջ ժամանակահատվածի համար դրամական հոսքերի կանխատեսման նախապատրաստում,

դ. որոշված կանխատեսվող ժամկետի վերջում մնացորդային արժեքի որոշման անհրաժեշտության դիտարկում, այնուհետև, հաշվի առնելով գնահատվող օբյեկտի բնութագրերը, համապատասխան տերմինալային արժեքի որոշում,

ե. դիսկոնտավորման դրույքաչափի որոշում,

զ. դիսկոնտավորման դրույքաչափի կիրառումը կանխատեսվող ապագա դրամական հոսքերի նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տերմինալային արժեքը:

Դիսկոնտավորման դրույքաչափը պետք է արտացոլի ոչ միայն դրամական միջոցի ժամանակավոր արժեքը, այլ նաև այն ռիսկերը, որոնք կապված են օբյեկտի ապագա շահագործման և դրամական հոսքերի տեսակի հետ:

Դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդները հետևյալն են՝

ա. Կապիտալի գնագոյացման մոդել (CAPM),

բ. կապիտալի նկատմամբ միջին կշռված ծախսեր (WACC) ,

գ. դիտարկվող կամ ստացված դրույքաչափերի և եկամտաբերության հարաբերակցություն,

դ. Կումուլյատիվ մեթոդ

### Եկամտի կապիտալիզացիայի մեթոդ

Եկամտի կապիտալիզացիայի մեթոդը հիմնականում կիրառվում է երբ առկա է եկամտի կայուն աճի տեմպեր և շահույթ գնահատման ամսաթվի դրությամբ, այս դեպքում կարիք չկա սահմանել կոնկրետ կանխատեսման ժամանակահատված, և տերմինալային արժեքը կարող է ծառայել որպես արժեքի որոշման միակ հիմք:

### Ծախսային մոտեցում

Ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտի ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ արժեք օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և ֆիզիկական մաշվածության ու հնացման բոլոր տեսակների կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, առկա է ծախսերի մոտեցման երեք մեթոդ.

ա. ծախսերի փոխարինման մեթոդ՝ արտացոլում է համարժեք օգտակարությամբ նմանատիպ օբյեկտի ստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը,



բ. ծախսերի վերաբարձրման մեթոդ՝ արտացոլում է օբյեկտի ճշգրիտ նմանակի վերատեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը:

գ. բաղադրիչային մեթոդ, որի շնորհիվ հաշվարկում է գնահատվող օբյեկտի արժեքը՝ օբյեկտի առանձին բաղադրիչ մասերի արժեքները գումարելով:

Ծախսային մոտեցումը պետք է ներառի բոլոր ծախսերը, որոնք տվյալ մասնակիցը կարող է կրել:

Արժեքի տարրերը կարող են տարբերվել, կախված գնահատվող օբյեկտի տեսակից և պետք է ներառեն ուղղակի և անուղղակի ծախսեր, որոնք պահանջվում են գնահատման ամսաթվի դրությամբ օբյեկտի փոխարինման (վերաբարձրման) համար, մասնավորապես՝

ա. *ուղղակի* ծախսեր (կյուրեր, աշխատուժ)

բ. *անուղղակի* ծախսեր (տրանսպորտային ծախսեր, տեղադրման ծախսեր, մասնագիտական վճարներ (նախագծային, թույլտվություն, ճարտարապետական, իրավաբանական և այլն), այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն), ընդհանուր ծախսեր, հարկեր, ֆինանսական ծախսեր (օրինակ՝ պարտքային ֆինանսավորման տոկոսներ) և ձեռնարկատիրական շահույթ):

Մաշվածության հետ կապված ճշգրտումները սովորաբար դիտարկվում են հետևյալ տեսակների համար, որոնք ուղղումներ կամ ճշգրտումներ կատարելիս կարող են հետագայում բաժանվել ենթատեսակների.

ա. ֆիզիկական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի կամ դրա բաղադրիչների ֆիզիկական մաշվածության պատճառով օգտակարության ցանկացած կորուստ, որն առաջացել է օգտագործման հետևանքով և տարիքից,

բ. ֆունկցիոնալ մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի անարդյունավետության հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ, համեմատած դրա փոխարինման հետ, ինչպիսիք են նախագծումը, տեխնիկական բնութագրերն ու տեխնոլոգիայի հնացած լինելը,

գ. արտաքին կամ տնտեսական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի նկատմամբ արտաքին համարվող տնտեսական կամ տեղական պայմանների հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ: Այս տեսակի մաշվածությունը կարող է լինել ժամանակավոր կամ մշտական:

Տվյալ դեպքում, գնահատվող գույքը կազմում է ընդհանուր բազմաբնակարան շենքի շատ փոքր մասը հետևաբար հաշվարկները կհանգեցնեն էական շեղումների, հետևաբար ծախսային մեթոդի կիրառումը չի տա իրատեսական արդյունքներ: Ծախսային մեթոդը չի կիրառվել վերը նշված հիմնավորմամբ:



## 12. Շուկայական արժեքի հաշվարկ համեմատական մեթոդով.

Անշարժ գույքի գնահատման ժամանակ համեմատական մեթոդը կիրառվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակի վերլուծություն և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվության ընտրություն,
- համեմատության համապատասխան միավորի որոշում,
- համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում,
- համեմատության միավորների արժեքի ճշգրտում,
- համեմատվող անշարժ գույքի համար արժեքի մի քանի ճշգրտված ցուցանիշների համապատասխանեցումը մեկ ցուցանիշին կամ գնահատվող անշարժ գույքի արժեքի միջակայքին (դիապազոն):

Որպես համեմատության միավոր են ընդունվում անշարժ գույքի շուկայում ձևավորված չափորոշիչները: Նույն անշարժ գույքի գնահատման համար կարող են միաժամանակ կիրառվել համեմատման մի քանի միավորներ:



Ստորև բերված աղյուսակում ներկայացված են «bnakaran.com» և «list.am» կայքերում (ազատ շուկա) արտացոլված՝ հետազոտվող տարածքում գտնվող, վաճառահանման ներկայացված և գնահատման ենթակա գույքին համադրելի գույքերի ելակետային տվյալները, որոնց 1մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսի շուկայական արժեքի նկատմամբ կիրառվել են ճշգրտման գործակիցներ.

Ստանդարտով նախատեսված մնացյալ գնագոյացման գործոնները, որոնցով գների ճշգրտումներ ստորև բերված աղյուսակում չեն կատարվել կամ գնահատվող անշարժ գույքի նույն գործոններից էականորեն չեն տարբերվում, կամ էլ գնահատողի կողմից չեն կիրառվել գնի վրա չնչին ազդեցության պատճառով:

# ՀՀ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ «ԱՐՄԵԲՍՊԵՐՏԻՉԱ» ՍՊԸ



## Համեմատական տվյալներ



| Համեմատության<br>ան էլեմենտը | Գնահատ<br>վող<br>օբյեկտը | օբյեկտ-անալոգ №1 | օբյեկտ-անալոգ №2 | օբյեկտ-անալոգ №3 |
|------------------------------|--------------------------|------------------|------------------|------------------|
| Անվանումը                    | բնակարան                 | բնակարան         | բնակարան         | բնակարան         |

Գնահատող

*Շահյան*

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
«ԱՐՄԵԲՍՊԵՐՏԻՉԱ» ՍՊԸ



| Հասցե                                                                                             | Ք. Երևան, Արաբկիր համայնք, Քանաքեռ շրջան, թաղամաս | Ք. Երևան, Արաբկիր համայնք, Ղափանցյան փողոց                                                          | Ք. Երևան, Արաբկիր համայնք, Ղափանցյան փողոց                                                          | Ք. Երևան, Արաբկիր համայնք, Ղափանցյան փողոց                                                            |
|---------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------|
| Վաճառքի գինը (Դրամ)                                                                               |                                                   | 40 069 050                                                                                          | 41 977 100                                                                                          | 33 200 070                                                                                            |
| Մակերես (քմ)                                                                                      | 65,6                                              | 69                                                                                                  | 75                                                                                                  | 60                                                                                                    |
| 1 քմ գինը (դրամ/քմ)                                                                               |                                                   | 580 711                                                                                             | 559 695                                                                                             | 553 335                                                                                               |
| N 1 Շուկայի վիճակ, վաճառքի պայմաններ, վաճառքի կամ առաջարկի ամսաթիվը                               |                                                   | <a href="https://www.list.am/item/21385522?id_src=2">https://www.list.am/item/21385522?id_src=2</a> | <a href="https://www.list.am/item/22912763?id_src=2">https://www.list.am/item/22912763?id_src=2</a> | <a href="https://www.list.am/item/22996347?id_src=10">https://www.list.am/item/22996347?id_src=10</a> |
| Ուղղումը (%)                                                                                      |                                                   | -10%                                                                                                | -10%                                                                                                | -10%                                                                                                  |
| Ուղղումը (դրամ)                                                                                   |                                                   | -58 071                                                                                             | -55 969                                                                                             | -55 333                                                                                               |
| Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)                                                                       |                                                   | 522 640                                                                                             | 503 725                                                                                             | 498 001                                                                                               |
| N 2 Գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքներ ի և օգտագործման նկատմամբ) |                                                   | գնահատվողի նման                                                                                     | գնահատվողի նման                                                                                     | գնահատվողի նման                                                                                       |
| Ուղղումը (%)                                                                                      |                                                   | 0%                                                                                                  | 0%                                                                                                  | 0%                                                                                                    |
| Ուղղումը (դրամ)                                                                                   |                                                   | 0                                                                                                   | 0                                                                                                   | 0                                                                                                     |
| Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)                                                                       |                                                   | 522 640                                                                                             | 503 725                                                                                             | 498 001                                                                                               |
| N 3 տեղադրությունը և դիրքը, տրանսպորտային հանգույցների                                            | լավ                                               | լավ                                                                                                 | լավ                                                                                                 | լավ                                                                                                   |

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ  
«ԱՐՄԵԲՍՊԵՐՏԻՉԱ» ՍՊԸ



|                                                                                                                  |               |            |            |            |
|------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|------------|------------|------------|
| առկայություն<br>ը և<br>մատչելիությունը                                                                           |               |            |            |            |
| Ուղղումը (%)                                                                                                     |               | 0%         | 0%         | 0%         |
| Ուղղումը<br>(դրամ)                                                                                               |               | 0          | 0          | 0          |
| Ուղղված 1 քմ<br>գինը<br>(դրամ/քմ)                                                                                |               | 522 640    | 503 725    | 498 001    |
| <b>N 4 շենքի<br/>տիպը,<br/>ֆիզիկական<br/>բնութագրերը,<br/>կոնստրուկտի<br/>վ նյութերի<br/>տարրերի<br/>տեսակը,</b> | Պանելային     | Պանելային  | Քարե       | Քարե       |
| Ուղղումը (%)                                                                                                     |               | 0%         | -3%        | -3%        |
| Ուղղումը<br>(դրամ)                                                                                               |               | 0          | -15 112    | -14 940    |
| Ուղղված 1 քմ<br>գինը<br>(դրամ/քմ)                                                                                |               | 522 640    | 488 613    | 483 061    |
| <b>N 5 շենք,<br/>շինությունների<br/>չափերը<br/>(բարձրություն,<br/>մակերես<br/>կամ ծավալ)</b>                     | 65,6          | 69         | 75         | 60         |
| Ուղղումը (%)                                                                                                     |               | 0%         | 0%         | 0%         |
| Ուղղումը<br>(դրամ)                                                                                               |               | 0          | 0          | 0          |
| Ուղղված 1 քմ<br>գինը<br>(դրամ/քմ)                                                                                |               | 522 640    | 488 613    | 483 061    |
| <b>N 6<br/>Հարկայնությունը,<br/>հարկը</b>                                                                        | 9-ի 7<br>հարկ | 9-ի 2 հարկ | 4-ի 4 հարկ | 5-ի 1 հարկ |
| Ուղղումը (%)                                                                                                     |               | 0%         | 3%         | 3%         |
